ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 84

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022Թ ԹԻՎ 83 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ թիվ 82-Ն որոշմամբ, որոշում եմ.

1.Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2022թվականի «ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 83 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ 1-ին կետում ավելացնել նոր ենթակետեր «ե/ 01.06.01 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4269 հոդվածից 600000/ վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարը տեղափոխել 09.01.01 «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 4637 հոդված, 01.01.01 «Կառավարման ապարատ» նախահաշվի 4212 հոդվածի 1-ին եռամսյակում ավելացնել 500000/ հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ» խմբագրությամբ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022թ. 02 09
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 85

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0053-0029 ծածկագրի հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք,Գյուլագարակ գյուղ, 24-րդ փողոց, թիվ 4/1 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022 թ. 02 10
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 86

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ.-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 392 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, որոշում եմ.

1.Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0015-0026 ծածկագրի հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, բնակելի տան նկատմամբ նրա սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 392 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/վերնագրի «հիմքերը վերականգնելու» բառերից հետո ավելացնել «կիսակառույց» բառը,
բ/2-րդ կետի «153,27քմ» թվերից և տառերը հետո ավելացնել «կիսակառույց» բառը,
գ/3-րդ կետի «22» թվից հետո ավելացնել «կիսակառույց» բառը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022 թ. 02 10
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 87

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԻ 06-057-0131-0017 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հենրիկ Օչինյանի լիազորված անձ Կարեն Օչինյանի դիմումը, «Գասպար Վեքիլյանի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, Գյուլագարակ համայնքի ղեկավարի կողմից տրված 10.02.2022թ.-ի թիվ 28 քաղվածքը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով՝որոշում եմ

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0131-0017 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,16391 հա մակերեսով վարելահողի հողհատկացման հիմքերը՝

ա/Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0131-0017 ծածկագրի տակ գտնվող վարելահողի մակերեսը 0.16391 հա

բ/հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշման 1-ին կետով նշված 0,16391 հա մակերեսով վարելահողը համատեղ սեփականության իրավունքով վերահաստկացնել Նինա Օչինյանին,Հենրիկ Օչինյանին, Ամալյա Օչինյանին և Սաթենիկ Օչինյանին:

3.Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ղեկավարի 14.10.2021թ.-ի թիվ 389 որոշումը և 12.10.2021թ.-ին տրված թիվ 56/1 քաղվածքը:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 22 թ. 02 10
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 88

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԻ 06-057-0131-0016 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հենրիկ Օչինյանի լիազորված անձ Կարեն Օչինյանի դիմումը, «Գասպար Վեքիլյանի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, Գյուլագարակ համայնքի ղեկավարի կողմից տրված 10.02.2022թ.-ի թիվ 28 քաղվածքը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով՝որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0131-0016 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,16894 հա մակերեսով վարելահողի հողհատկացման հիմքերը՝

ա/Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0131-0016 ծածկագրի տակ գտնվող վարելահողի մակերեսը՝ 0.16894 հա

բ/հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշման 1-ին կետով նշված 0,16894 հա մակերեսով վարելահողը համատեղ սեփականության իրավունքով վերահաստակցնել Նինա Օչինյանին, Հենրիկ Օչինյանին, Ամալյա Օչինյանին և Սաթենիկ Օչինյանին:

3.Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ղեկավարի 14.10.2021թ.-ի թիվ 390 որոշումը և 12.10.2021թ.-ին տրված թիվ 56/1 քաղվածքը:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022թ. 02 10

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 89

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի ԹԻՎ 55 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, որոշում եմ.

1.Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 02-ի «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0054-0007 ծածկագրի հողամասի հողահատկացման հիմքերը վերականգնելու, ժուլետա անուշավանի կողմից մինչեվ 15.05.2001թ. զբաղեցրած հողամասի նկատմամբ, մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան, բնակելի տան բ/պ կամ ա/հ և անասնաշենիքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին » թիվ 55 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հանել որոշման հիմքի «տեղագրական հատակագիծը» բառերից հետո գրված՝ «ժառանգության իրավունքի վակայագիր՝ գրանցամատյան՝ թիվ 5357» բառերը և թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022թ. 02 10
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 90

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան բնակավայրի 06-057-0005-0004 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Կուրթան բնակավայր, 5-րդ փողոց , թիվ 110 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022թ. 02 10
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 թվականի N 91

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից բնակավայրի 06-013-0026-0003 ծածկագրի բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Ամրակից բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 55:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 թ.
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 92

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՐԱԿԻՑ ԳՅՈՒՂԻ 06 013 0120 0024 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուզաննա Գևորգյանի դիմումը, «Գագիկ Վլադիմիրի Մեսրոպյանի» ԱՁ ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, Գյուլագարակ համայնքի ղեկավարի 12.01.2022թ. ին կողմից տրված քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8 րդ և 16 րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով՝ որոշում եմ

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի 06-013-0120-0024 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,501220 հա մակերեսով վարելահողի հողհատկացման հիմքերը՝
ա/Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի 06-013 0120-0024 ծածկագրի տակ գտնվող վարելահողի մակերեսը 0.501220 հա
բ/հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի :
2.Սույն որոշման 1 ին կետով նշված 0,501220 հա մակերեսով վարելահողը սեփականության իրավունքով վերահատկացնել Լուսվարդ, Լյուսիկ, Սուզաննա Գևորգյանների և Ռուզաննա Սագթաղյանի համատեղ սեփականության իրավունքը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022թ. 02 14
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 93

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խորեն Եգանյանի կողմից ներկայացված դիմումը՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 06-057-0019-0014 կադաստրային ծածկագրում նրա կողմից ինքնակամ կառույցի օրինականացնելու խնդրանքը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, սեփականության իրավունքի վկայական՝ թիվ 29112021-06-0042, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912 Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1.Օրինականացնել Խորեն Եգանյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 1050 քմ հողամասում 2021 թ. ին ինքնակամ կառուցված՝ 230 քմ արտաքին մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտ:
2.Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 230 քմ արտաքին մակերեսով արտաքին մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտի համար 290260/երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ: Օրինականացման համար ընդհանուր գումարը կազմում է՝ 290260/երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255000078 հաշվեհամարին:
3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից. որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի Կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 94

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 06-029-0053-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 26.03.1991Թ. ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄԻՑ ՔԱՂՎԱԾՔԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հիմք ընդունելով 24.01.2022թ. համայնքի ղեկավարի կողմից տրամադրված՝ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 26.03.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը

1. Անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի կողմից 06 029 0053 0003 կադաստրային ծածկագրի անշարժ գույքի համար կադաստրային գործում առկա նախկինում տրամադրված քաղվածքը, քանի որ այն տրամադրված է եղել սխալ:
2. Գյուլագարակ գյուղի 06 029 0053-0003 կադաստրային ծածկագրի անշարժ գույքի պետական գրանցման համար հիմք ընդունել Գյուլագարակ համայնքի ղեկավարի կողմից տնտ.հ.3 գրքից,գրանցման N 219 քաղվածքը,որը հիմք է հանդիսացել ժառանգության վկայագրի համար՝ գրանցամատյան 6402 և 17.02.2022թ. տրամադրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 26.03.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2022թ. 02 17
գ.Գյուլագարակ